

exceptionally based on national interests.

Key words: Artsakh issue, discourse analysis, parties' programs, national interest.

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՈՒ ՏԵՂՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՇԵՂ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԱՅՈՒՄ

Գուրգեն Միսոնյան

Քաղաքական գիտությունների թեկնածու

Կառավարումը եղել և մնում է մարդկային քաղաքակրթության գլխավոր հիմնախնդիրներից մեկը: Կառավարող ընտրանուկացությունը և իշխանության ֆենոմենի հիմնախնդիրները չեն կորցրել իրենց արդիականությունը XXI դարում:

Տեղեկատվահաղորդակցական հնարավորություններն ու կրթության հասանելիությունը ավելի արդյունավետ պայմաններ են ընձեռում պետական իշխանության իրականացման համար, սակայն պետական կառավարման արդյունավետության բարձրացման և ժողովրդավարացման գործընթացի շարունակականության ապահովման տեսանկյունից այն շարունակում է մնալ քաղաքագիտական և քաղաքատնտեսական կարևորագույն հարցերից մեկը: Վերջինիս կարևորությունն ու արդիականությունն էլ ավելի է դառնում ակնառու, երբ այն դիտարկվում է ոչ միայն ներպետական անկայունության, այլ նաև տարածաշրջանային և համաշխարհային «չարիքների» առաջացման տեսանկյունից:

XXI դարում առկա են այնպիսի հիմնախնդիրներ, որոնց լուծումն ու կանխարգելումը վեր է առանձին պետության հնարավորություններից: Դրանց լուծման համար անհրաժեշտ է պետական դաշինքների, միջազգային կազմակերպությունների և համաշխարհային հանրության գործուն միջամտությունը: Նմանատիպ «չարիքների» դասին են պատկանում. ահաբեկչությունը, ցեղասպանությունները, թրաֆիքինգը, թմրամոլությունը և ենթամշակութային այլասերումը, տեխնոգեն և հումանիտար աղետները, բնության և բանականության էկոլոգիան: Վերջին ժամանակների իրադարձությունները, մասնավորապես «արաբական գարնանը» հաջորդած տարիները, վկայում են, որ հումանիտար

աղետների, այլատյացության և հակաբարոյական ագրեսիայի դրսևորման հավանականությունը շեշտակի աճում է թույլ պետության կամ վերջինիս հարաբերական գոյության պայմաններում: Համաձայն ամերիկացի վերլուծաբան Ֆ. Տուկոյամայի թույլ պետությունը և՛ ազգային, և՛ միջազգային «առաջին աստիճանի»՝ պրոբլեմների պատճառ է: Հաշվի առնելով դասական գրականության մեջ լայն տարածում գտած մի շարք մտեցումները՝ նկատենք, որ «Ուժեղ պետություն» եզրույթը հաճախ նույնացվում է ուժեղ բյուրոկրատական համակարգի և իշխող ռեժիմի հետ: Վերջինս, ուժեղացնելով պետական ենթակառուցվածքները, կիրառում է բռնի ուժ քաղաքացիական հասարակության կայացումը զսպելու և պետական շահը իշխող դասակարգի խմբային շահերին ենթարկելու համար: Վերոնշյալ բնութագրումը չի պատասխանում «Ուժեղ պետություն» եզրույթի արդիական մեկնության բոլոր պահանջներին, քանի որ ներպետական «կարգի» պահպանության արդյունավետությունը դեռ բավարար հիմք չէ հանրային վստահության, բարեկեցության և լեզիտիմ իշխանության առկայության համար, այն կարող է լինել նաև իշխանության բռնի վերարտադրման պայմաններում: Պետական ներուժի համեմատականները տարվում են ոչ միայն **«խելամիտ անցյալ»- «իրատեսական ներկա»- «ռազմավարական ապագա»** եռաչափության տիրույթներում, այլ նաև հավանական արտաքին մարտահրավերներին հավասար արժեք պատասխանելու տրամաբանության մեջ: Ուստի պետական «ուժը» ունի **ֆիզիկական, նյութական, հումանիտար և հոգեբանական** արտահայտություն: Այս համատեքստում անհնարին է կայացնել հաջողված քաղաքականություն առանց հանրային վստահությունը վայելող իշխանությունների և պետական քաղաքականությանը օժանդակող, կազմակերպված քաղաքացիական հասարակության: Ազգ-պետությունների պարագայում «Ուժեղ պետություն» եզրույթն ընկալվում է, որպես քաղաքականապես ակտիվ և մրցունակ ազգի արտաքին և ներքին մարտահրավերներին հավասարարժեք պատասխանելու ներուժ: Այդ առումով ուշագրավ է, որ XX դարի 50-

¹Фужуяма Ф. Сильное государство: Управление и мировой порядок XXI веке; Пер. с англ. М., АСТ, Владимир: ВКТ, 2010.С. 8.

60-ական թթ. ձևավորված արդիականացման տեսության տեսաբանները՝ հենվելով Մ. Վեբերի, Է. Դյուրգեյմի, Ֆ. Թյոնիսի եվրոպական քաղաքակրթության արդիականացման մշակութային հիմքերի վրա հիմնավորեցին պետության ծագմանը և արդիականացման նպաստող հետևյալ հիմնական սկզբունքների ընդհանրությունը՝ մշակութային վերելքի ձգտող և ապրող ազգ, արտաքին կամ ներքին սպառնալիքներից անկախ մնալու կամք, սոցիալական բարդացող հարաբերություններ²: Ելակետ ընդունելով այս մոտեցումը փաստենք, որ պետությունը որպես քաղաքական համակարգի գերակա ինստիտուտ, ունի հզոր գործիքակազմ, որի միջոցով «...որոշակի քաղաքակրթական սկիզբ ունեցող ինքնիշխան ազգերն արտաքին և ներքին մարտահրավերներին հավասարաթեք պատասխանելու և բնականոն արդիականանալու համար դրսևորում են քաղաքական կամք»³:

Քառօրյա պատերազմին հաջորդած իրադարձությունները կերպափոխեցին հանրային և քաղաքական կյանքը արդիականացնելով հանրային, խմբային և պետական շահերի մետամորֆոզն ու փոխլրացումը, դրանց բավարարման համար նախատեսված մեթոդներն ու տեխնոլոգիաները: Նոր սերնդի մարտահրավերները ստիպում են նորովի դիտարկել պետական կառավարման արդյունավետության հիմնախնդիրները, քաղաքական ընտրանու իրավասության և կառավարչական հմտությունների չափորոշիչները, տնտեսության ստվերի և ձևավորված մենաշնորհային ցանցի վտանգավորության աստիճանն ու քաղաքացիական հասարակության ներուժի ուղղորդման անհրաժեշտությունը պետականաշինության գործընթացում: Կարևորելով պետական կառավարման ժողովրդավարական արժեհամակարգը՝ անհրաժեշտ է ընդգծել, որ հայկական պետությունների զարգացման և ուժեղ պետության կայացման կարևորագույն գործոնը պետական կառավարման գործընթացում հանրային մասնակցության բարձր մակարդակի ապահովումն է:

²Хабермас Ю. Политические работы. Сост. А. В. Денежкина; Пер. С нем. Б. М. Скуратова. М., Праксис, 2005. С. 272

³Смит. Э. Национализм и модернизация: Критический обзор современных теорий наций и национализма. Пер. с англ. А.В. Смирнова, Ю.В. Филиппова, Э.С. Загашвили, И. Окуновой. М., Праксис. 2004. С. 321.

Վերոգրյալը ենթադրում է, որ ռազմավարական ընտրանին պետք է ձևավորվի բազմիշխանության սկզբունքներին համահունչ՝ բոլորին ընձեռելով հավասար ելակետային հնարավորություններ:

Համաձայն Արիստոտելի (384-322 մ.թ.ա.)՝ մարդիկ, իբրև սոցիալական արարածներ, ձգտելով կատարելության, անընդհատ փոխհարաբերվում են միմյանց հետ, ինչի շնորհիվ անխուսափելիորեն ձևավորում են հասարակություն և նրա ֆորմալ կազմակերպությունը՝ պետությունը: Նա տղամարդու և կնոջ միասնությունն ու դրանից բխող ընտանիքի արարումը դիտարկում է որպես մարդկային իրացիոնալ պահանջմունքի ռացիոնալ դրսևորում, որի շարունակական զարգացման արդյունքը պետության ձևավորումն է: Հետևաբար՝ ընտանիքը նա համարում է իբրև պետական բարդ համակարգի մանրագույն մասնիկ՝ բջիջ, որի ստեղծմանն ու կայացմանը մեծապես նպաստում է շփումը իր հաղորդակցման բոլոր միջոցներով, որոնցից կարևորագույնը խոսքն է. «Խոսքը կարող է արտահայտել և օգտակարը, և վնասակարը, ինչպես նաև այն, ինչ արդարացի է, և այն, որ անարդար է: Դա մարդու այն հատկանիշն է, որը տարանջատում է նրան այլ կենդանի արարածներից. միայն մարդը կարող է հասկանալ բարին և չարը, արդարությունն ու անարդարը և այլն: Իսկ այս ամենի ամբողջությունն էլ արարում է ընտանիքի և պետության հիմքերը»⁴: Պլատոնի (428-347 Ք.ա.) իդեալական պետության խոհափիլիսոփայության համաձայն պետության սահմաններում պետք է տիրի արդարության մթնոլորտը, որտեղ իշխանությունները կառաջնորդվեն բացառապես ժողովրդի հետաքրքրություններով: Այսպիսով, արդարության պայմաններում կառավարիչները դադարում են իշխելու ամոթալի մոլուցքով առաջնորդվելուց այլ մտտեևում են կառավարմանը իբրև ծառայության ի փառս երկրի և ժողովրդավարության. «Ահա թե ինչու կառավարումը ստանձնողների համար պետք է լինի պարգևատրություն՝ փող կամ հարգանք, կամ էլ պատիժ, եթե նրանք հրաժարվեն կառավարել»⁵:

Տրամի կարծիքով՝ հասարակության կայացման համար

⁴Аристотель. Политика. М., АСТ. 2010. С. 25.

⁵Платон, Избранные диалоги; Пер. с древнегреч. С.К. Акта, Я.М. Боровского, Т.В. Васильевой, А.Н. Егунова, С.П. Маркина, М.С. Соловьева, С.Я. Шейнман-Топштейн; вступ. ст., комм. Л. Сумм. М., Эксмо, 2007. С. 587.

աշխատում է մարդկային բնագոյներից բխող իռացիոնալ պահանջմունք, որը, սեփական «Ես»-ի առանձնացման ու ինքնագիտակցմանը զուգամիտվելով, պարպում է մարդու ինքնաիրացման և մենության երկյուղից ձերբազատվելու կամքը: Նա իր աշխատանքներում հիմնավորել է, որ մարդու հոգեկերտվածքին հատուկ է նույնականացման բնագոյը, քանի որ մարդը «օժտված է բանականությամբ» և «ինքն իրեն գիտակցող կյանքն է»: Նույնականացման բնագոյն արտահայտվում է երկակի՝ իբրև «Ես» և «հոտ»: Մարդը ցանկանում է և՛ կերտել սեփական անհատականությունը, և՛ գիտակցել իր յուրօրինակությունը, և՛ հաղորդակցվել մյուսների հետ՝ կազմելով ընդհանուր ամբողջություն. «Այդ՝ առանձին էակ հանդիսանալու ինքնագիտակցությունը, սեփական վերջավոր կյանքի մասին և այն, որ ծնվել է ակամա ու անկախ իր կամքից, կմահանա, որ նա կմահանա ավելի վաղ, քան նրանք, ում նա սիրում է, կամ նրանք իրենից շուտ, սեփական մենության և օտարվածության, բնության և հասարակության գործության առջև իր անօգնական վիճակի վերաբերյալ գիտակցումը կերպափոխում է նրա միայնակ, առանձնացված գոյությունը՝ այն վերածելով իրական բանտի: Եթե նա չկարողանա ազատվել այդ բանտից և լինել ազատ, չկարողանա ինչ-որ կերպ միանալ մարդկանց և արտաքին աշխարհին, նա կխելագարվի»⁶: Յուրաքանչյուր անհատ, գիտակցելով ինքն իրեն, փորձում է պատասխանել սեփական նկարագրի բոլոր հարցերին: Բանականության գիտակցական և ենթագիտակցական այդ գործընթացում անհատը նույնանում է տվյալ հանրության և քաղաքակրթությանը: Մարդկային արժեշահային համակարգի վերլուծությունը հնարավորություն է ընձեռում ընդհանուրի մասին խորքային պատկերացումներ կազմել: Այն թույլ է տալիս համակողմանի ուսումնասիրության ենթարկել ազգային շահը և «շահ» հասկացության մետամորֆոզը՝ ընդհանուր քաղաքակրթության համատեքստում: Հնարավոր չէ ամբողջությունը դիտարկել անկախ տարրերից, որոնցով այն ամբողջանում է. մեկ մասնիկի գործոնը և կատարած ընտրությունը կարող են ճակատագրական ազդեցություն ունենալ քաղաքակրթության

⁶Фромм Э., Искусство любить: [пер. с англ.]. М.: АСТ: Астрель, 2012. С. 16.

պատմության ընթացքի կանխորոշման գործընթացում: Գիտնական Ա. Թոյնբին, ընդունելով, որ անփոխարինելի մարդիկ հազվագյուտ են, գտնում էր, որ իրականում գոյություն ունի միայն անհատը: Ըստ նրա, երբ խոսում են կառավարությունների, ազգերի, եկեղեցիների կամ կազմակերպությունների կողմից կատարված կամ կրած ինչ-որ իրադարձությունների մասին, ապա խոսում են միջերի լեզվով. «Ինստիտուտը մարդ չէ, այն մարդկանց միջև հարաբերությունների ցանց է: Մենք մեղք ենք գործում, երբ դրա մասին խոսում ենք այնպես, ասես խոսելու լինենք մարդու մասին»⁷: Ուստի հաճախ ուսումնասիրողները հանրույթը, ազգն ու ժողովուրդը դիտարկում են իբրև անհատի ռացիոնալ ընտրության արդյունք:

Հանրագումարելով վերոգրյալը՝ կարելի է նկատել, որ յուրաքանչյուր պետության վերելք ուղիղ համեմատական է ռազմավարական ընտրանու կայացման և գործառնման ունակություններից: Ուշագրավ է այն հանգամանքը, որ կայված էթնոմշակութային միջամտածողությունից և արքետիպերից ընտրանու կառավարման հիմնախնդիրը լուծվում է ինչպես ներքնից արդիականացման միջոցով այնպես էլ վերնից արդիականացմամբ: Այս ամենի հետ մեկ տեղ փաստենք, որ իրավասու մասնագետներով պետական կառավարման համակարգը համալրելու համար անհրաժեշտ է տրամադրել մրցունակ կրթություն:

Բանալի բառեր. ռազմավարական ընտրանի, ազգային շահեր, գուզամիտում, արդիականացում, ինքնիշխանություն, անվտանգային քաղաքականություն, նոր սերնդի մարտահրավերներ, ուժեղ պետություն, քաղաքակրթություն, արքետիպեր:

РОЛЬ И ЗНАЧЕНИЕ СТРАТЕГИЧЕСКОЙ ЭЛИТЫ В ПРОЦЕССЕ СТАНОВЛЕНИЯ СИЛЬНОГО ГОСУДАРСТВА

Гурген Симосян

Кандидат политических наук,

РЕЗЮМЕ

Последующие дни четырёхдневной войны преобразовали

⁷Тойнби А. Дж., Роль личности в истории: пер. с англ. М.: Астрель, 2012. С. 7.

гражданскую и политическую жизнь страны: модернизировалась метаморфоза и взаимосвязь социальных, групповых и государственных интересов, методы и технологии достижения последних. Вызовы нового поколения требуют новые толкования вопросов результативности государственного управления, компетентности и критерий управленческих способностей политической элиты, степень теневой экономики и риска формировавшейся коррупционной сети, а так же значимость направления потенциала гражданского общества в русло государствовстроения. Осознавая важность демократических ценностей государственного управления необходимо подчеркнуть, что значимым условием для развития армянских государств и становления сильного государства является повышение степени гражданского участия в процессе государственного управления. Вышеизложенное подразумевает, что стратегическая элита должна быть сформирована согласно принципам полиархии, предоставляя всем равные исходные возможности.

Ключевые слова: стратегическая элита, национальные интересы, конвергенция, модернизация, суверенитет, политика безопасности, вызовы нового поколения, сильное государство, цивилизация, архетипы.

PLACE AND DESIGNATION OF STRATEGIC SELECTION IN THE PROCESS OF FULFILLMENT OF ASTRONG COUNTRY

Gurgen Simonyan

Candidate of Political Science,

SUMMARY

Since the proclamation of the independence of the Republic of Armenia, the Armenian Nation had series of perceptions and expectations, which have not been clarified, and the illusive nature of which should be proved during the decades. It is obvious, that the events, succeeded to the *four-day war*, changed the public and political life, contemporizing the metamorphose and co-addition of the public-group-state interests, methods and technologies anticipated for their satisfaction. Challenges of new generation make us to discuss main problems of the efficiency of state administration, standards of competency of

the political selection and governmental skills, degree of dangerousness of the shade of economy and formulated corruption net and the necessity of the potential of political society in a new way. Being faithful to the democratic value system of state administration, it is necessary to emphasize, that the most important factor, for the development of the Armenian Countries and the fulfillment of a strong country, is the support of public participation in state administration process in a high level. The above mentioned implies, that the strategic selection must be formulated due to the principles of multiple authorities, giving each citizen equal starting possibility.

Key words: strategic selection, national interests, convergence, modernization, sovereignty, security policy, new generation battle calls, strong state, civilization, archetypes.

NARRATIVE OF FOUNDATION: NARRATIVES OF ACHIEVEMENT OF INDEPENDENCE IN ARMENIAN POLITICAL DISCOURSE

Mikayel Zolyan

Candidate of Historical Sciences

Researchers studying social and political phenomena know that the actions of political actors are often represented and justified through references to "glorious" events of the past⁸. References to the past are used as a source of legitimacy not only for political figures and movements but also for state institutions. Often the same historical events, albeit in different interpretations, are utilized by political opponents as a basis for legitimacy of their conflicting claims. Thus, the discourse of politics is full of references to the past, whether distant or recent, references which are used to justified the political aims of the current moment.

The late 1980s and early 1990s were a key period not only for Armenia, but also for the South Caucasus and the whole post-socialist world. This was a time, when totalitarian regimes in USSR and other countries of Eastern Europe/Central Eurasia collapsed, and in some regions, including

⁸The research is supported by the RA MES State Committee of Science, within the frames of the joint Armenian - Russian research project №.15PT-24, Semiotics of Political Discourse: Transdisciplinary Approach.